

« 29 » 09 2015

№ 1.9 - 1197

Կոնվերս բանկ ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Մենք պատասխանատու ենք բանկի ֆինանսական վիճակը արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար: Այսպիսով բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

Բանկում գործում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգ:

Բանկում գործում է, բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ,

Բանկում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Տիգրան Դավթյան

Գոհար Հարությունյան



« 29 » 09 2015

Կոնվերս բանկ ՓԲԸ խորհրդի հավաստիացում

N: 1.9-1195

Բանկի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Խորհրդի նախագահ՝



Արմեն Տեր-Տաճատյան

« 29 » 09 2015

N: 1.9-1196

Տարեկան Ֆինանսական հաշվետվությանը կից բանկի ֆինանսական վերլուծություն

Կոնվերս բանկ ՓԲԸ ղեկավարությունը ներկայացնում է Բանկի 2014թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

2014թ.-ը բանկի համար նշանավորվեց մասնաճյուղային ցանցի արդիականացմամբ, մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմամբ և հաճախորդների սպասարկման որակի բարձրացմամբ, ինչի արդյունքում բանկն ամրապնդեց իր դիրքերը ՀՀ բանկային համակարգում:

2014 թվականին Բանկին հաջողվեց արձանագրել ակտիվների և պարտավորությունների զգալի աճ: Մասնավորապես, Բանկի ընդհանուր ակտիվները նախորդ տարվա նկատմամբ աճեցին 21.6%-ով՝ տարեվերջին կազմելով 147.6 մլրդ դրամ նախորդ տարվա 121.4 մլրդ դրամի փոխարեն:

Նոր վարկառուների ներգրավման և գործող վարկերի արդյունավետ մոնիտորինգի ուղղությամբ իրականացված միջոցառումների շնորհիվ տարվա ընթացքում հնարավոր եղավ գրանցել Բանկի վարկային պորտֆելի էական աճ: Արդյունքում վարկային ներդրումներն աճեցին 16.17%-ով և կազմեցին 92.89 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 79.96 մլրդ դրամի փոխարեն:

Տարեվերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները կազմեցին 125.13 մլրդ դրամ, որից 92.44 մլրդ դրամը Հաճախորդներից ներգրավված միջոցներն էին՝ սա խոսում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին:

2014թ-ին Բանկի տարեկան զուտ շահույթը կազմեց 2,063 մլն դրամ, իսկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքը՝ 1,591 մլն դրամ:

Բանկի ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 18.09%-ով՝ տարեվերջին կազմելով 22.5 մլրդ դրամ:

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրակացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է "Ռիսկի կառավարում" թիվ 34 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է՝ Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:



Խորհրդի նախագահ՝

Արմեն Տեր-Տաճատյան

Խորհրդի անդամներ՝

Ջուան Պարլո Գեչիդջյան

Արսեն Գամաղեյան

	« ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ » ՓԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ	<p style="text-align: right;">Հաստատված է</p> <p style="text-align: center;">“Կոնվերս Բանկ” ՓԲԸ Խորհրդի 29.04.15թ. նիստի որոշմամբ /թիվ 12 արձանագրության, 2-րդ հարց/ Խորհրդի նախագահ՝  Արմեն Տեր-Տաճատյան</p>
---	--------------------------------------	---

**Եզրակացություն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին
հսկողության իրականացման նվազագույն պայմանների համապատասխանության
վերաբերյալ**

Մույն եզրակացությունը կազմված է Կոնվերս Բանկ ՓԲԸ-ի Ներքին աուդիտի կողմից 2014 թ.-ի ընթացքում իրականացրած տարեկան ծրագրով սահմանված ստուգումների և ընթացիկ հսկողության արդյունքների վրա:

Մեր կարծիքով Կոնվերս Բանկ ՓԲԸ ներքին հսկողության համակարգը, 2014 թ.-ի ընթացքում, մեծամասամբ, համապատասխանել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին: Միաժամանակ բանկը աշխատանքներ է իրականացնում ընդլայնելու ներքին հսկողության համակարգերը, մասնավորապես համապատասխանության գործառույթի, կապիտալի համարժեքության գնահատման գործընթացների, ռիսկերի կառավարման նոր մեխանիզմների գործարկման միջոցով:

Լիլիթ Յորդանյան
Ներքին աուդիտի ղեկավար

